Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024 թվականի մայիսի 8-10-ը Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

   Ժաննա Անդրեասյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

   2024 թվականի մայիսի 8-10-ը Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ)

4. Հրավիրող կողմը.

   Կանանց գլոբալ գագաթնաժողովի նախագահ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   Կանանց գլոբալ գագաթնաժողովին և նախարարական կլոր սեղանին մասնակցելու նպատակով:
   Իսպանիայի Թագավորություն կատարած այցի շրջանակում կազմակերպվել են նաև հանդիպումներ Իսպանիայի կրթության, մասնագիտական ուսուցման և սպորտի նախարար Պիլար Ալեգրիայի, ԻԹ մշակույթի նախարար Էռնեստ Ուրտասունի, ԻԹ գիտական հետազոտությունների գլխավոր քարտուղար Էվա Օրտեգայի հետ, ինչպես նաև այցելություններ կրթական և մշակութային հաստատություններ:

6. Քննարկված թեմաները.

Իսպանիայի Թագավորություն կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպել եմ Իսպանիայի կրթության, մասնագիտական ուսուցման և սպորտի նախարար Պիլար Ալեգրիայի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Իսպանիա երկկողմ կապերի ամրապնդման, համատեղ ծրագրերի իրականացման հարցերը, ներկայացվել են Հայաստանում իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև իմ կողմից նշվել է, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում է հանրակրթության նոր չափորոշիչը, որտեղ մեծ տեղ է հատկացվում ԲՏՃՄ և օտար լեզուների ուղղությամբ կրթությանը:
Իսպանիայի կրթության, մասնագիտական ուսուցման և սպորտի նախարարի հետ հանդիպմանը քննարկվել են ուսումնական հաստատությունների կառավարմանը, ուսումնական հաստատություններում սովորողների կրթության որակի բարձրացման վրա ազդող գործոններին և սովորողների ուսումնառության մոտիվացիայի բարձրացմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև մասնագիտական կրթությանն ու իսպաներենի ուսուցմանն առնչվող հարցերին:
Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում սպորտի կառավարման մոդելի զարգացմանը և այդ համատեքստում քննարկվել իսպանական փորձի ուսումնասիրության հնարավորությունը:

Հանդիպել եմ Իսպանիայի Թագավորության մշակույթի նախարար Էռնեստ Ուրտասունի հետ:
Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև մշակութային կապերի ամրապնդմանը վերաբերող հարցեր:
Կարևորվել են նաև հարաբերություններն ընդլայնելու հնարավորությունն ու տարբեր կառույցների, անհատ ստեղծագործողների և ստեղծագործական խմբերի միջև համագործակցությունը խթանելու անհրաժեշտությունը, երկու երկրներում անցկացվող միջազգային մշակութային միջոցառումներին մասնակցությունը, անմիջական կապերի հաստատումն ու փորձի փոխանակումը:
Անդրադառնալով Հայաստանում մշակույթի ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ տեղեկացրել եմ Հայաստանի կինոոլորտում մի շարք օրենսդրական փոփոխությունների մասին, մասնավորապես՝ համատեղ կինոարտադրության համար ներդրումների մինչև 40%-ի չափով մասնակի վերադարձի հնարավորության մասին, որն այս ոլորտում ևս փոխհամագործակցության զարգացման հնարավորություն կարող է ապահովել:

Հանդիպել եմ նաև Իսպանիայի Թագավորության գիտական հետազոտությունների գլխավոր քարտուղար Էվա Օրտեգայի հետ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Հայաստանի և Իսպանիայի միջև համագործակցության զարգացման հնարավորություններին:

Ներկայացվել է իրականացվող բարեփոխումների ընթացքը՝ բարձրագույն կրթության և գիտության ոլորտներն ինտեգրելու և մեկ միասնական համակարգ ու քաղաքականության ունենալու նպատակով նախորդ տարի ստեղծված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գործունեությունը:

Ներկայացնելով Հայաստանում գիտության ոլորտի զարգացման պետական քաղաքականությունը նշել եմ, որ աշխատանքներ են տարվում ոլորտում երիտասարդների ներգրավվածությունը մեծացնելու և խթանելու ուղղությամբ:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև «Էրազմուս» և «Հորիզոն Եվրոպա» ծրագրերին: Իսպանական կողմին ներկայացվել է «Ակադեմիական քաղաք» ծրագիրը՝ այդ համատեքստում կարևորելով նաև միջբուհական համագործակցությունը և այդ ուղղությամբ ՏՏ, բնական գիտությունների և ագրոտեխնոլոգիաների ոլորտներում համատեղ աշխատանքները: Նշվել է, որ Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները շահագրգռված են ընդլայնել Իսպանիայի Թագավորության հետ արդեն գոյություն ունեցող համագործակցության շրջանակը, ակտիվացնել փոխայցելությունները, համատեղ միջոցառումների կազմակերպումը:

Այցի շրջանակում այցելել եմ Սերվանտեսի ինստիտուտ:

Սերվանտեսի ինստիտուտում հանդիպել եմ միջազգային հարաբերությունների տնօրեն Լուիս Մարինայի հետ, նշել, որ Հայաստանում մեծանում է հետաքրքրությունը իսպաներենի և իսպանական մշակույթի նկատմամբ ոչ միայն բուհերում, այլև որոշ դպրոցներում, որտեղ ուսումնասիրվում է իսպաներեն: Հանդիպմանը քննարկվել է Հայաստանում Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցության և համապատասխան կենտրոն հիմնելու հնարավորությունը, որը կնպաստի նաև իսպանական մշակույթի ուսումնասիրությանը, միջոլորտային հաղորդակցությանը և կապերի զարգացմանը:

Այցելել եմ նաև Մադրիդի Կոմպլուտենս համալսարանական քաղաք:
Հանդիպմանը ներկա է եղել նաև համալսարանում գործող Հայագիտության հատուկ ամբիոնի ղեկավարը:

Ծանոթացել եմ համալսարանական քաղաքի գործունեությանը, որի մասնաճյուղերից ամենամեծում սովորում է 71 հազար ուսանող:

Ուսումնական հաստատության ղեկավար կազմի հետ Հայաստան-Իսպանիա միջբուհական համագործակցության զարգացման մասին խոսելով՝ ներկայացրել եմ ՀՀ կրթության՝ մինչև 2030 թ. ռազմավարությունը, որով նախատեսված է «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացումը:

Ներկայացնելով Մադրիդի Կոմպլուտենս համալսարանի Հայագիտության հատուկ ամբիոնի գործունեությունը՝ ամբիոնի ղեկավարը նշել է, որ այստեղ դասավանդվում են հայագիտական առարկաներ և իրականացվում են հետազոտական աշխատանքներ: Ամբիոնի ղեկավարը ևս կմասնակցի առաջիկայում Մատենադարանում կայանալիք համաժողովին, քննարկվել են նաև Կոմպլուտենս համալսարանում հայագիտական համաժողով կազմակերպելու հնարավորությունները:

Հանդիպել եմ Իսպանիայի ազգային գրադարանի տնօրեն Օսկար Առոյո Օրտեգային, ծանոթացել Իսպանիայի ազգային գրադարանի գործող ցուցահանդեսներին, ինչպես նաև գրադարանային ֆոնդին, որտեղ պահվում են նաև 17-րդ դարի հայերեն ձեռագրեր:

Ներկայացրել եմ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան գիտահետազոտական ինստիտուտի գործունեությունն ու հարուստ պատմական ժառանգությունը և փաստել, որ Մատենադարանը հին ձեռագրերի վերականգնման հարուստ փորձ ունի: Քննարկվել են համատեղ ցուցահանդես կազմակերպելու, համագործակցության հուշագիր ստորագրելու հեռանկարները՝ փաստելով համատեղ ծրագրեր կյանքի կոչելու հաստատակամությունը:

Այցելել եմ Մադրիդի Պրադո ազգային թանգարան և հանդիպել միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանսիսկո Տարդիո Բաեսայի հետ:

Նշել եմ, որ ՀՀ կառավարությունը կարևորում է միջազգային հեղինակավոր թանգարանների հետ համագործակցությունը՝ անդրադառնալով Բրիտանական թանգարանի և Լուվրի հետ ՀՀ թանգարանների համագործակցությանը:

Պրադո թանգարանի ղեկավարությանը հրավիրել եմ սեպտեմբերի 21-ին Հայաստանի պատմության թանգարանում «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» միջազգային ցուցահանդեսին՝ ծանոթանալու նաև հայկական մշակույթին, թանգարանային գործունեությանը և միասին քննարկելու համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Քննարկվել են թանգարանային ոլորտին առնչվող մի շարք ծրագրեր՝ մասնավորապես թանգարանների աշխատակիցների վերապատրաստման, ինչպես նաև թանգարանային մենեջմենթի մագիստրոսական ծրագրերը: Հանդիպմանը քննարկվել են նաև իրականացվող այն ծրագրերը, որոնք միտված են մշակույթի ապակենտրոնացմանը և սոցիալական լայն խմբերի ընդգրկմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կանանց 2024 թվականի գլոբալ գագաթաժողովի նախարարական կլոր սեղանին հանդես եմ եկել ելույթի խոսքով, որտեղ նշել եմ, որ ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստանի մասնակցությունը գագաթաժողովին, որի հիմքում կանանց իրավունքների պաշտպանությունն է՝ որպես կայուն զարգացման նպատակներին հասնելու ճանապարհ: Անդրադարձել եմ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական բարեփոխումներում կանանց ներգրավվածությանը և, առհասարակ, հանրային կյանքում կանանց դերին:
Նշել եմ, որ 2019 թվականից մշակվել է հանրակրթության նոր չափորոշիչը՝ ուսումնական ծրագրերում ներառելով նաև գենդերային զգայունության թեման: Ծրագրերը մշակվել են Եվրախորհրդի հետ համագործակցությամբ՝ փորձագետների ներգրավմամբ մանկավարժներին վերապատրաստելով: Չափորոշչի փորձարկման փուլի գնահատումը ցույց է տվել, որ նոր չափորոշչի ներդրումը սովորողների շրջանում 6 ամսվա ուսումնական արդյունքի դինամիկ աճ է ապահովել, ինչն աննախադեպ ցուցանիշ է միջազգային համանման արդյունքների համեմատ:
Ելույթում ներկայացրել եմ նաև STEM ոլորտում կանանց դերի բարձրացմանն ուղղված ծրագրերի խրախուսումը, Հայաստանում գյուղատնտեսական մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում (MAVETA) ծրագիրը, որը մեկնարկել է 2021 թվականի դեկտեմբերի 3-ին և կտևի մինչև 2030 թվականը:
Անդրադարձել եմ նաև բարձրագույն կրթության ոլորտում կանանց ներգրավմանն ուղղված ծրագրերին և ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետությունում գիտության մեջ կանանց ներգրավվածության ցուցանիշները:
Նշեմ, որ Կանանց 2024 թվականի գլոբալ գագաթաժողովին մասնակցել են աշխարհի շուրջ 70 երկրների ներկայացուցիչներ:
Համաժողովի շրջանակում հանդիպել եմ նաև Կանանց 2024 թվականի գլոբալ գագաթաժողովի նախագահ Իռենե Նադիլիդադի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Իսպանիայի ԻԹ կրթության, մասնագիտական ուսուցման և սպորտի նախարար Պիլար Ալեգրիայի հետ ստորագրվել է «Իսպանիայի Թագավորության կրթության, մասնագիտական ուսուցման և սպորտի նախարարության միջև սպորտի ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր:
Ըստ փոխըմբռնման հուշագրի՝ կողմերը կզարգացնեն հարաբերությունները սպորտի ոլորտում՝ հաշվի առնելով, որ սպորտն ամուր հենասյուն է բարեկամական հարաբերությունների և փոխըմբռնման ամրապնդման համար:
Կողմերը հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ համագործակցելու սպորտային բժշկության, հակադոպինգային գործունեության, խոշոր մարզական միջոցառումների կազմակերպման, սպորտի ոլորտում մասնագետների և ղեկավարների վերապատրաստման, երիտասարդ մարզիկների ձևավորման, սպորտում կանանց ներգրավվածության բարձրացման և այլ ուղղություններով: Կողմերը կհամագործակցեն նաև մասնագետների, տեխնիկական անձնակազմի և փորձագետների փոխանակման շրջանակում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Իսպանիայի Թագավորության գիտական հետազոտությունների գլխավոր քարտուղար Էվա Օրտեգայի հետ հանդիպման ընթացքում կարևորվել է երկու երկրների համապատասխան կառույցների միջև համագործակցությունը, որի համատեքստում պայմանավորվածություն է ձեռքբերվել ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իսպանիայի ազգային հետազոտական խորհրդի միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին հուշագիր ստորագրելու վերաբերյալ:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության ծրագրերի շրջանակում ներկայացնել համատեղ նախագծեր: Միաժամանակ ընդգծվել է, որ արդեն իսկ առկա է արդյունավետ համագործակցություն՝ շուրջ 2500 համատեղ հրապարակումներ կան հայ և իսպանացի գիտնականների և հետազոտողների միջև:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև հայագիտության ոլորտում համատեղ հետազոտություններ իրականացնելու հնարավորությանը, քանի որ Մադրիդի Կոմպլուտենս համալսարանում գործում է հայագիտության ամբիոն, իսկ ազգային գրադարանում առկա են հայկական ձեռագրեր: Այդ համատեքստում նշվել է, որ հայագիտական առարկաների ուսումնասիրության համար ՀՀ ԿԳՄՍՆ-ն տրամադրում է կրթաթոշակային տեղեր: Քննարկվել է Կոմպլուտենս համալսարանում հայագիտական միջոցառումներ կազմակերպելու հարցը:

Սերվանտեսի ինստիտուտի միջազգային հարաբերությունների տնօրեն Լուիս Մարինայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իսպաներեն ուսումնասիրող ՀՀ բուհերի և Սերվանտեսի ինստիտուտի միջև ակտիվ համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Իսպանիայի արվեստի ազգային կենտրոն-թանգարան՝ Ռեյնա Սոֆիայի թանգարանի տնօրեն Մանուել Սեգադեի ուղեկցությամբ շրջայց է կատարվել թանգարանի ցուցասրահներում, քննարկվել մշակույթի ոլորտում համագործակցության հեռանկարները, մասնավորապես, երկու երկրների թանգարանների միջև:
Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Երվանդ Քոչարի 125-ամյակի շրջանակում Իսպանիայի արվեստի ազգային կենտրոն-թանգարանի հետ համատեղ ցուցադրություն կազմակերպելու հնարավորությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

5/14/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

14.05.2024թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 338-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. մայիսի 8-10-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն
որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

√ ☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան			Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***447109***			***447.109***
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	175			175
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	73121			73.121
	Օրերի քանակը	2			2
	Ընդամենը (դրամ)	***146241***			***146.241***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	112			112
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	46797			46.797
	Օրերի քանակը	3			3
	Ընդամենը (դրամ)	***140391***			***140.391***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***733.741***			***733.741***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 733741 << դրամ, ենթակա է վճարման 0 << դրամ:

ԿԳՄՄՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**